Ի–ին[1]) օր Կիրակի Բուն Բարեկենդան. Կէլիպօլու Գրիգորն ի մերս էր եկեալ, հօրեղբօր որդի հօրն իմոյ։

Մարտ ամիս Գշի։

Ժ–ին օր Եշի. Թագաւորն ձայնեալ զվէզիրն ի ներս, յիւրում պալատի խեղդամահ արարեալ և ընկեցեալ արտաքս, պատճառելով վնաս ինչ՝ խրատով ներքինեացն և ներսի մեծամեծացն, զի զինչ կամին զայն առնել տան Թագաւորին. եւ եդին վէզիր զՉէրքէզ Տէվրիշ Մէհմէտ փաշան։

Դշի (23 Մարտ). զփուռքն հացի նեղացոյց՝ բազումս զանելով զբանվորսն և զհացածախս նոցին, զի ի տեղիս տեղիս պակասացուցանէին զհացն։

Իէ–ին օր Կիրակի Լուսաւորչի. Ազնաւորն մեր մեռաւ։

Ապրիլ ամիս օր Ուրբաթ։

Գ–ին Կիրակի Ծաղկազարդ։

Է–ին Աւագ Եշի և Աւետիք Աստուածածնի[2])։

Թվին Հայոց ՌՃԲ Ապրիլի Ժ Զատիկ և Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Կաթողիկոսն ի Սուրբ Նիկողոս էր, և Լեհցի Նիկօլ եպիսկոպոսն ընդ նմա էր, եկեալ անդէն առ կաթողիկոսն՝ հնազանդելով նմա. վասն զի ԺԸ տարի էր որ ի մէջ ալեաց տատանէին ազգս Հայոց անդ ի Լեհ ի ձեռանէն սմա. քանզի փակեալ զեկեղեցիս նոցա և զմեռեալսն ոչ տայր թոյլ թաղել ըստ օրինի, և զգանձս եկեղեցոյն զամենայն ցրուեալ՝ զկահս և զանօթս և զգեստն ամենայն, ընդ անառակս արբեցութեամբ մինչև ցայժմ ([illegible])։

Եւ ի միւսում Բշի ԺԸ–ի ամսոյ ելաւ տօնանման

1) ԻԱ-ին. 2) Ածծն.